

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուրջի կէս տարվան 6 բուրջի Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлясь, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բայ է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և աօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Կ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չլատող ազդեցութիւն. Ներքին ՏեՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գիւղական ցաւերից: Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական գործերը. Արտաքին լուրեր.—ՀեՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այսպէս էր խօսում Չրագաչաւը:

ՁԱՏՈՂ ԱԳՐԵՑՈՒԹԻՒՆ

Հռչակաւոր գերմանական զինական Բուրժուա Վիրթուալիտետը, խօսելով նորերս „Indépendance Belge“ լրագրի աշխատակից Մորի հետ Թրանսիայում, Գերմանիայում և Եւրոպական ուրիշ երկիրներում տարածվող այն հոսանքի մասին, որ կոչվում է նացիոնալիզմ, շօշինիզմ, յայտնեց իր գլուխակցին և հակադրութիւնը, տեմեկով այդ հոսանքի մէջ կեղծիքի, զրպարտութեան և խարդախութեան մի մարմնացում:

Այդ հոսանքի մէջ, ասում է Վիրթուալիտետը, կանգնել են միայն զանազան տարրեր: Ազգային պատեր և շահի պատրուկով գործողներն ստուար խմբի մէջ չը կան ոչ սկզբունքներ, ոչ ծրագրեր, ոչ որոշ քաղաքական նպատակներ: Նրանք ազդակում են ամբողջ հայրենիքի անուշից իրանց բոլոր ուժով, աշխատելով հաւատացնել, որ միայն իրանք են սիրում իրանց հայրենիքը և կռուված են նրան ծառայելու, որ իրանք են ամբողջ ազգի և երկրի ներկայացուցիչները: Նրանք շոյում են ամբոխի զգայունները, ցանկանալով ժողովրդական շարժումների գլուխ կանգնել: Կեռ անքաղաքակիրթ երկիրներում այդ շարժումը կարող է ձնուլ գործել փոքրամասնութեան դաւանանքի և համայնական շահերի վրա, իսկ քաղաքակիրթ երկիրներում նա միայն ազմուկներ է հանում, չը պարունակելով

իր մէջ լուրջ վտանգներ: Յամենայն դէպս դա տխուր և անմխիթար հասարակական մի երեւոյթ է:

Վիրթուալիտետը, որ իր հայրենիք Գերմանիայի ամենանշանաւոր քաղաքացիներից մէկն է և և իր ամբողջ գործունէութեամբ ապացուցել է իր անկեղծ հայրենասիրութիւնը, վրդովվում է տեմեկով, թէ ինչպէս անարժան և ստոր անձնաւորութիւններ աշխատում են միմայնից հասարակական գիտակցութիւնը իրանց փնասակար և մտլորեցնող ազդակներով, վարագուրելով այդ բոլորը ազգի պատուի և ազգի շահերի անուշով:

Վժբադարձար այդ մուտ և շուքնող ազդակները միշտ և ամեն տեղ գտնուում են հեռուողներ, որոնք, ձիւղ է, չեն կանգնեցնում քաղաքակիրթութեան և լուստարի ազդակներին յաղթանակի դործը: Բայց հանդիսանում են ժամանակաւոր խոչընդոտներ և յամենայն դէպս մոցնում են հասարակական առաջադիմութեան գործի մէջ ապարդիւն գրգիռներ և գործողների համար յոգնեցուցիչ և ջլատող տարրեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Русскія Вѣдомости» լրագրի № 236-ում առաջին տեղ է նուիրված Գրիգոր Ջանչեանի յիշատակին, նրա մահվան քառասորեակի առիթով:

«Այդ քառասուն օրվայ ընթացքում, ասում է ուսու լրագիրը, մենք անդադար ստանում էրք ասոն գոյուցը ցաւութեան արտայայտութիւններ մեր թանգագին ընկերոջ և անմոռանալի աշխատակցի մահվան առիթով: Գրեթէ ամբողջ մայրաքաղաքային և գաւառական մամուլը արձադանք տուեց Գրիգոր Ջանչեանի յիշատակին նուիրված յօդուածներով: Բազմաթիւ նամակ-

ներ և հեռագրեր, որոնց մի մասը արդէն հրատարակել ենք, պարզ ցոյց են տալիս, որ յանձին Ջանչեանի շատերը կորցրել են ոչ միայն սիրելի գրողի, այլ և իրանց արտին մօտ մարդու, որ ծառայում էր մարդկանց ոչ միայն իր անխնայ, բարերար աշխատանքով, այլ և իր ազնիւ, սիրառասարտով...»

Անունեւեւ բերվում է քաղաւածք մի նամակից, որ ուսու աչքի ընկնող վիպագրիւնրից մէկը գրել է «Руч. Вѣд.»-ի խմբագրին.

«Ճիւղ որ քաղաքաւոր մարդու թնամիւնն են մեռնում, իսկ անբաղդի բարեկամները... Ինչպէս վտարցից ինձ անմոռանալի Գրիգոր Ջանչեանի մահը, Յանձին նրա անակնկալ կերպով կորցրին իրանց բարեկամին, — և ինչպիսի բարեկամին, — ոչ միայն նրա թշուառ ցեղակիցները, հայերը, այլ և մի անձ, որ նոյնպէս բաղդաւորներից էր... Կրթված, ստաջաւոր Ռուսաստանը... Ինչ կարելի է այս դէպքում ասել ի միութարութիւն: Ինչ կարելի է ասել մահաւանդ ձեզ, որ այնքան մօտիկ էիք այդ ազնիւ հոգուն, այդ մեծահոգի արտին...»

Պ. Ասարով իր նամակում, ընտրելով Ջանչեանին իբրև իրաւագիտական գրուածքների հեղինակի, վերջացնում է այսպէս.

«Հանգիստ աճեցիք, հանգուցեալ գործիչ: Ճշմարտութեան և արդարութեան մեծ գործը, որի համար դու աշխատում էիր, հիմք կը ծառայի երախտագէտ լինելի դէպի քեզ ապագայ սերունդներին, որոնք ժառանգութիւն են ստանում քեզից: Կենդանի, ազնիւ գաղափարով և անկեղծ զգացմունքով ստորգրված գրական կրկերք»

Մի ուսու ուսանող գրում է խմբագրութեան, ի միջի այլոց, հետեւեալը.

«Նրա (Գր. Ջանչեանի) հաստատ համոզվածութիւնը, իբրի վրա ունեցած լայն իրաւական հայեացքը, լուսնային յայտնի յայտնաբերում, լուսնային յայտնաբերում էր 60-ական թուականների պատմական շրջանի լուսնային մարդկանց ուղին, — նրա գրութեանը կարգալիս անցնելի տպագրութիւն էին թողնում մարդու հոգու մէջ, ակամայ ստիպում էին մարդու սաքով բարձ-

րանալ դէպի այն փառաւոր ժամանակները...»

Ռուս լրագիրը քաղաւածքներ է բերում և հեռագրերից:

«Ջերմ արտասուքներով, — ասված է Աստրախանից ուղարկված հեռագրում, — կողողէ այդ մահվան լուրը այն երեք հազար երկխանների սիրտը, որոնց հառաչանքները հանգուցեալ Ջանչեան լսեց հաղաբաւոր վերստերից իր նրբազգայ սրտով:»

«Братская Помощь» ժողովածուի աշխատակիցներից մէկը գրում է.

«...Հարեւաւոր որք երկխանների օգնութեան և վրկութեան գործը, երկխանների, որոնք կորցրել էին իրանց ծնողներին ամենասարսափ պայմաններում, — կատարվեց մի հատ մարդու սիրոյ և կամքի ոյժով: Միայն մի հատ մարդու անձնական ջանքերի շնորհիւ, առանց որ և է նպաստելով և նպաստատաւոյց մասնաժողով կազմելու, հաւաքվեց վաթսուէն հազար թուրքու մի գումար, որ ամբողջապէս նուիրվեց վթարաւթեան կենդանի գործին:»

«Մեծ բէֆորմների շրջանի» յայտնի գործիչ Արցիմովիչի կիւր գրում է արտասահմանից.

«...Թոյլ եմ տալիս ինձ յայտնելու մեր ամբողջ ընտանիքի կողմից թէ և ուշացած, բայց անկեղծ և խորին ցաւակցութիւն այդ բարի և չիտակ մարդու կորուստի մասին, որ միշտ համակրում էր ամեն բանի, ինչ որ ազնիւ է և լուսն:»

Հոչակաւոր քննադատ Բելինսկու ազնիւր, Օլգա Վիսարիօսովնա Բէնզի կրեւէի կանեա քաղաքից ցաւակցական նամակ է ուղարկել խմբագրութեան, խնդրելով պակ դնել գերեզմանի վրա:

Խմբագրութեան մօտիկ մարդկանցից մէկը գրում է.

«...Ես չը կարողացայ հեռաւոր արտասահմանց մատուցանել թանգագին բարեկամին, ընկերիս և հազուադիւր մարդուն, որ կարողացաւ այսպիսի տխուր ժամանակներում պահպանել իր փիտրուն մարմնի մէջ իր մաքուր, բիւրեղային հոգին, պահպանել իր երկասարգութեան հաւատը դէպի լուսադին»

Թող ասողի շողերը շողան ձեր (կանանց) սիրոյ մէջ: Թող ձեր յայը լինի «Օ», երանի գերմարդ ծնվել ինձից:»

...Տղամարդը իր հոգու խորքում չար է միայն, իսկ կիւր՝ անօրիտան:

...Կիւր պէտք է հպատակվի... (Չրագաչաւը այդ բոլորը ասում է մի պատու կնոջ, որ ի շնորհակալութիւն յայտնում է նրան «մի փոքրիկ ճալարտութիւն»):

«Եթէ կնոջ մօտ ես գնում, չը ստանաս հեռոյ վերջնել մտրակը:»

Օ ձի խայթոցի մասին

«...Երբ անիծում են ձեզ, — ինձ չէ գուր դալիս, որ դուք օրհնում էք անիծողներին: Աւելի լուս է դուք էլ անիծէք:»

«Մի փոքր ռիսակալութիւնը աւելի մարդկային է, քան ռիս կատարեալ բացակայութիւնը (Անարարութիւնը տանել առանց բողբոջու ամեն մարդու բան չէ, — գրա համար պէտք է բաւականաչափ օժտված լինել):»

Երեխայի և և ամուսնութեան մասին

«...Երբ դէմ է այն ամուսնութիւններին, որոնց դրիւր անասնական ցանկութիւնն է կամ ձանձրութիւնը միջանկարկութիւնը: Ամուսնութեան իմաստը նրանումն է, որ երկու հոգի ստեղծեն «մի երրորդին, որ աւելի է քան իրան ստեղծողները»: Ամուսնիները պէտք է մեծ յարգանք տածեն դէպի միմանց, իբրև նոյն բարձր նպատակին ձգտողներ: Սուրբ է այդպիսի ամուսնութիւնը:»

«...Բազմաթիւ առանձին, վաղանցուկ յիմարութիւններ — այդ դուք անուսնում էք սէր: Իսկ ձեր ամուսնութիւնը, իբրև մի երկարատեւ յիմարութիւն, վերջ է դնում այդ բոլոր կարճատեւ յիմարութիւններին...» (Չը շարունակվի)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՅՍԳԵՍ ԷՐ ԽՕՍՈՒՄ ԶՐԵՎԱԶՏԸ

Ո Ղ Չ Լ Խ Ո Ն Ո Ւ Թ Ե Ա Ն մ աս Ի ն

(Նիցչէ չէ սիրում շատ զգայական, կրքոտ մարդկանց, բայց և գնահատում է միայն այն ողջախոնութիւնը, որ բնական է, միամիտ և անպիտակից: Ով ի բնէ ողջախոն չէ, Նիցչէ խորհուրդ չէ տալիս նրան աշխատել սպանել իր զգայականութիւնը, որովհետեւ գրանով նա չի ունենայ, այլ կը գառնայ միայն կեղծաւոր հոգու զիմակաւորված հեշտասիրութիւնն):

Ի արեկամութեան մասին

«...Եթէ դու սարուկ ես, բարեկամ լինել չես կարող: Եթէ բռնակալ ես, բարեկամ ունենալ չես կարող:»

Կիւր շատ երկար ժամանակ է եղել սարուկ և բռնակալ: Այդ պատճառով կիւր անընդունակ է բարեկամութեան, — նա սիրելի գիտէ միայն:

«...Կիւր դեռ անընդունակ է բարեկամութեան: Կանայք դեռ կատուներ են, կամ թրուշուներ, կամ, ամենալաւ դէպքում, կովեր:»

Կիւր դեռ անընդունակ է բարեկամութեան: Բայց ասացէք ինձ դուք, տղամարդիկ, ո՞վ կայ ձեր մէջ ընդունակ բարեկամութեան:»

Հազար ու մէկ նպատակներ ժամանակին

(Ամեն ազգ, ըստ Նիցչէի, ունի իր առանձին բարոյագիտութիւնը, իր առանձին հայեացքները: Ընդ ու բարբի մասին: Բարոյական ամեն ազգ համարում է այն, ինչ որ նրան հարաւորութիւն է տալիս իշխելու ուրիշ ազգերի վրա): «Իրաւ եմ ասում, մարդիկ ամբողջապէս ի-

րանք են ստեղծել իրանց համար չարն ու բարին: Իրաւ եմ ասում, նրանք չեն փոխ առել և չեն դառն չարն ու բարին և ոչ էլ նա ի՞նչ է նրանց մօտ, իբրև մի ձայն երկիւքից»...

(Չը կայ ուրիշն այնպիսի բան, որ լինի անպայման չար կամ անպայման բարի: Բարոյականութիւնը կախված է այն նպատակից, որին ձգտում են մարդիկ: Մինչև անգամ կային հազար նպատակներ, որովհետեւ կային հազար ազգեր: Մարդկութիւնը մի միութիւն չէ կազմում դեռ, որովհետեւ չունի մի ընդհանուր նպատակ, ուրիշն մարդկութիւն դեռ գոյութիւն չունի բարի բուն նշանակութեամբ: Ըստ Նիցչէի, ինչպէս գիտենք, մարդկութեան նպատակը պէտք է լինի գերմարդ առաջացնելը):

Ընկերայինութեան մասին

«...Սորհուրդ եմ տալիս ես արդեօք ձեզ սիրել ձեր ընկերոջը (մերձաւորին): Ես զխաւոքապէս խորհուրդ եմ տալիս ձեզ սիրել հեռաւորներին (ապագայի մարդկանց, իրէպակական մարդուն, գերմարդուն):»

«... Ես քարոզում եմ ձեզ ոչ ընկերոջ, այլ բարեկամի մասին: Թող բարեկամը լինի ձեզ համար տօն աշխարհիս երեսին և նախազգացումն գերմարդու:»

«... Բո բարեկամի մէջ դու պէտք է սիրես գերմարդուն...»

Ստեղծագործողի ձանապարհի մասին

(Առաջ ազգերն էին ստեղծում բարոյագիտութիւն իրանց համար, նրանք էին միայն ստեղծագործող. այժմ կան և առանձին անհատներ, որոնք ստեղծում են բարոյագիտութիւն, — ստեղծագործող անհատներ, որոնք չեն ուզում գնալ հօտի հետ: Սակայն կան և այնպիսիները, որոնք չունեն ոչինչ ինքնուրոյն, այլ

Թարիզի մեզ ուղարկել են Գրիգոր Զան- շեանի եղբորը յանձնելու համար այն պատկի- ժապաւենը, որ այնտեղի երիտարարութիւնը գրել էր եկեղեցում օգոստոսի 13-ին կատար- ված հոգեհանգստի ժամանակ ժապաւենի վրա տպված է Պարտաճանաչ եւ որբախնամ Գրի- գոր Զանշեանի անուն յիշատակին»:

Գիտութիւնների կայսերական Ակադեմիան տեղեկութիւն է ստացել, որ կամենկա գետի չըջանում գտնված է աղամանի հանք կամեն- կա գետը Սանարկա գետի ճեղքերից մէկն է եւ բոլորով է Ռեքարկան լեռներից: Աղամանի նոր գիւղը Ռեքարկան լեռներում հաստատում է սուս նշանաւոր հանքարան կոչվարովի կարծի- քը, որ տարիներ առաջ գուշակել էր, թէ Սա- նարկա գետը պարտաւորութիւն է իր մէջ աղա- մանի աւազաններ:

Օգոստոսի 24-ին լեռնային վարչութիւնը տնկել էր 200-ամեայ գոյութեան դարկիցը 1700 թէ օգոստոսի 24-ին հրատարակված ու- կանգով Պետրոս Մեծը հրամայեց ինձնարկել հանքային գործերի վարչութիւն, որն ապա ըն- դարձակվելով եւ ենթարկվելով զանազան փո- փոխութիւնների ընդունեց այժման լեռնային վարչութեան կազմակերպութիւնը:

Մեզ խնդրում են սպիկ հետեւեալ լուրը: «Ամեն անգամ, երբ նուրբիցները իբր թէ ուխտ են գնում հոշակաւոր Բիչը կամ ձայլթի վան- քը, հաստատ հաւատացած եղէք, որ այդտեղ կոխներն ու աղմուկները անպակաս կը լինեն: Մեծ հոգեհանգստի նուրբիցները պատմում են միմեանց զէպի մասին, գովասանական անա- կաններ տալով կուի հերոսներին»: «Այ տուրին, այն ջարդեցին հա... կրկնում են նոյն իսկ Ե- րեւանները: Այս անգամ կոխը տեղի է ունե- ցել օգոստոսի 13-ին, ձայլթի վանքում, նու- խուց եւ չըջակայ գիւղերից հաւաքված խումն բազմութեան առաջ: Հերոսը արտասահմանում իբր թէ սովորող թառայեան ազգանունով ինչ որ պարեն է եղել»:

Պ. Ե. Վարդանանց Մեծիկի մեզ խնդրում է սպիկ հետեւեալը: «Մշակի» № 112-ի ներքին լուրերի բաժնում Մեղրից հաղորդված էր, որ իբր թէ, ներկայ թւին, Մեղրում տարածված Ա. Թաղեանանցի չեքանի սերմը լաւ հունձ է տուել: Պարտք եմ համարում յայտնել, որ եթե ներորդ տարին է ինչ Թաղեանանցի սերմը, իմ միջոցով, տարածվում է Մեղրում եւ ա- մեն տարի էլ լաւ հունձ է տուել: Այս տարի տարածել եմ 14 ֆունտ սերմ եւ միջին թուով 18 ֆունտ արդիւնք է տուել, պակասը եղել է 15 ֆունտ, շատ 25 ֆունտ: Գալով տեղական երեք նոր սերմ պատրաստողներին, որոնց սկսնակներ միայն կարող ենք անուանել, նը- բանցից իւրաքանչիւրը 60—70 մսխալ սերմ էր պատրաստել շատ լաւ արդիւնքով, բայց դա դեռ չէ նշանակում, թէ Թաղեանանցի սերմը վատ էր»:

ԿԱՂՁՈՒՄՆԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 8-ին այստեղ եկաւ պ. կարա-Մուրզա եւ հե- տեւեալ օրը 56 հոգուց բաղկացած մի խումբ կազմեց, որի մէջ էին 1 տիկին եւ 15 օրիորդներ: Պ. կարա-Մուրզան 5 օրով 16 երգ սովորեց- րեց խմբին քառամասն եւ առաջին համերգը տուեց կիրակի օրը, օգոստոսի 13-ին, հայոց նախկին դպրոցի դահլիճում: Հանդիսականներ խնդրեցին երկրորդ անգամ համերգ կազմել եւ ծաղկէ փունջերով ու բուռն ծափահարութիւն- ներով արտայայտեցին իրանց գոհունակու- թիւնը պ. կարա-Մուրզային: Դահլիճում, ինչ- պէս ասում են, ստեղ գեղու տեղ չը կար, որով ասում են, բայց անհանգստ թւից՝ մտաու- բապէս 30 հոգի էլ դռները մտա ու անցե- բուն էին կանգնել, դեռ շատերն էլ գրկվեցին տեղ չը լինելու պատճառով: Երկրորդ համերգը արվեց օգոստոսի 17-ին, աւելի եւս մեծ աջո- ղութեամբ: Շատ երգեր կրկնվեցին հանդիսա- կանների ցանկութեամբ: «Լուրիկ» եւ «Լեւի- զաղաք» երգեց սով. Ս. Ղազարեանց, «Կոնու- կը» երգեց օր. Ե. Ղազարեանց, իսկ «Ձմեռն անցաւ» պ. Տ. Տօնակունեան. բոլորն էլ ըն- զուովեցին բուռն ծափահարութիւններով: Երկ- րորդ համերգի վերջում խաղաղվեց «Արշակ Բ.» ողբերգութիւնից երկրորդ գործողութիւնը: Ար- շակի դերը մեծ աջողութեամբ կատարեց բժիշկ- կաճկահանու: Օգոստոսի 18-ին, պ. կարա- Մուրզա իր խմբով մի «Մանկական առաւօտ» կազմեց մանուկներին եւ չքաւոր դասակարգի համար, մուշքը ձրի, որտեղ հրաւիրված էին մեծ մասամբ գաղթականներ իրանց զաւակնե-

րով: Հարկերից աւելի երեխաներ հրճուանքով լցված՝ լուս լուս էին եւ երբ երբ վերջա- նում էր՝ անպատմելի բերկրութեամբ ծափա- հարում էին ու գոչու. «Կեցցէ կարա-Մուր- զան, կեցցէ խումբը»:

Ղազարի գաւառի ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐ-ԱՂ- ԲԻՒՐ գիւղից մեզ գրում են. «Ահա երեք տա- րի է, որ Շամշադին չըջակայ գիւղերը կանոնա- տար հունձ չեն տալիս, երբեմն երաշար եւ եր- բեմն էլ կարկուտը խել են խեղճ գիւղացու օրվա պարտաւոր: Բայց այս տարի բոլորովին անսպասելի արձաւիթք է զոհ գնում գիւղա- ցու յոյսը. անձրեւը, որ անընդհատ տեղում է օր ու փշեր, բոլոր արտերը փակեցրեց: Ծերե- րը պատմում են, որ այս տեսակ եղանակ ի- բանց կեանքում երբէք տեսած չեն: Բնութեան նետ միտացած, ոչ պակաս փեսաներ են պատ- ճառում մեր գիւղերին չըջակայ աւազակաբա- րոյ թուրքերը: Օգոստոսի 14-ին, առաւօտեան ժամը 9-ին, գիւղում ձայն տարածվեց, որ մի գոյգ եղ են գողացել: Գիւղացիներն անմիջապէս ընկան գողերի ետեւից: Քիչ անցած լուրջին հրացանների ձայնը: Այդ ժամանակ սպան- վում է աւազակներից մէկը, գնդակի հարուած ստանալով ուղիղ ճակատի միջից: Սպանվածը թուրք էր: Ընկերները, որոնք նմանապէս թուրքեր են եղել, փախչում են: Սպանվածի մտա գտնվում է մի գոյգ եղ եւ մի խուրջին՝ միջը 2 մորթված գառներ. բայց այդ նրա վրա լինում են աւազակներից հարկաւոր զա- նազան գործիքներ: Գտնված եղերը կարծի- աղբիւրները չէին: Բանից երեւում է, որ այդ գիւղերում ընթացում այդ խումբը, երեք մասի բաժանված, գործում է եղել զանազան սեղերում եւ գողացել է Թաւուզ գիւղից մի գոյգ գոռէջ, Բերթ գիւղից էլ 3 ձի ու երկու եղ: Հետեւեալ օրը եկաւ պրիստաւ Ամիրա- լավարին եւ կանխելով թուրքերին յայտնեց Ե- ղելութիւնը. բայց մինչեւ օրս դեռ սպանվածի տէրը չէ դուրս եկել: Պրիստաւը պահանջեց թուրքերից, որ անպատճառ գտնվին հայերից գողացված տաւարները, բայց համոզված ենք, որ գծուար թէ գտնվին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

«Рус. Вѣд.» լրագրին հեռագրում են Բեր- լինից. «Որովհետեւ Անգլիայի այս կամ այն վե- րաբերմունքը դէպի սուսայ կառավարութեան առաջարկութիւնը Պեկինից զօրքերը հեռացնե- լու մասին կարող է ամենամանր հետեւանքներ ունենալ, ուստի ամեն տեղ անհամբեր սպա- սում են Սոյբերիի պատասխանին: Ուշա- դրութեան արժանի են «Daily Telegraph»-ի դատողութիւններն այդ մասին, որովհետեւ այդ լրագիրը շատ մտա է միմիտարութեան նախա- գահին: «Daily Telegraph» ասում է. «Բոլոր պետութիւնները համաձայն են այն բանին, որ չինական նախկին կառավարութեան վերականգ- նումը կարագայնէ խաղաղութիւն հաստատե- լու գործը. հէնց այս պատճառով Ռուսաստանի առաջարկութեան հակառակորդները վերջ ի վերջոյ բարոյապէս հարկադրված կը լինեն հե- տեւելու այդ պետութեան օրինակին, մանա- ւանդ, որ Տեանձիլը շատ աւելի լարմար տեղ է բանակցութիւններ վարելու համար, քան Պե- կինը: Գերմանիան պէտք է մտածէ, թէ արժէ արդեօք պնդել նախկին հայեցակէտի վրա, եւ պէտք է աչքի առաջ ունենալ, որ ինքը, առանց Անգլիայի ակալիցութեան, անգոր է»:

Անգլիական լրագիր այս փաստաբանութեա- նը «Kölnische Zeitung» պատասխանեց մի յո- դուածով, որ անուշա թելալովված էր նրան գերմանական արտաքին գործերի միմիտար- րութիւնից: «Թէպէտ եւ Լոնդոնում պնդում են, — գրում է «Köln. Zeit.» — որ «Daily Telegraph»-ի դատողութիւնները արձագանք են Սոյբերիի հայեացքների, բայց մենք չենք ուղում հաւատա- ղրան» — արդէն չափազանց պարզ ու ակնհե- լէ, որ Անգլիան ցանկութիւն է յայտնում, գնե- լով սուրը Գերմանիայի պարանոցին, պահան- ջել, որ նա գնայ միայն Սոյբերիի յետեւից: Անգլիան իրողը է տանջում իրան, թէ ինչպէս պէտք է մենք պահպանենք մեր պատմական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ. մենք կարող ենք հաւատացնել Անգլիային, որ չինա- կան բարենորոգումների հարցի պատճառով մենք մեր բարեկամական յարաբերութիւնները չենք խզի հարեւան մեծ պետութեան հետ: Ոչ ոք Պեկինում երկար մնալու ցանկութիւն չու- նի. տարաձայնութիւնը նրանումն է միայն,

թէ երբ պէտք է հեռանալ չինական մարաթա- ղաքից — հիմա, թէ յետոյ»:

«Francfurter Zeitung»-ի թղթակիցը հեռա- գրում է Շանհայից. «Անգլիական մամուլը լուրեր է տարածում, թէ իբր Ռուսաստանը ծածկարար առաջարկել է Գերմանիային վերց- նել Պեկինի եւ Շանհայի նահանգները, իսկ ինքը վերցնում է ամբողջ Մանչուրիան եւ Մուռուսիան: Այդ լուրերի նպատակը շատ պարզ է. անգլիացիները կը կամենային քա- ղաքական աշխարհի ուշադրութիւնը հեռու պահել Շանհայի հովիտից: Անկասկած Անգլիան կը համաձայնէր ամեն բանին, միայն թէ ամենա- լաւ բաժինը — Եանցիկ հովիտը — իրան ընկնէր»:

Նոյն լրագրի Բերլինի թղթակիցը բայցար- ձակապէս հերքում է վաչկագոտից ստացված յայտնի հեռագիրը, որով հաղորդվում էր, թէ հինգ պետութիւններ արդէն համաձայնվել են սուսայ կառավարութեան առաջարկութեանը, որ բազմաբնակ էր արտաքին գործերի մի- նիստութեան կառավարչի չըջակարկանում:

«Մի քանի անձինք դեպատանտներին պատ- կանող անդամներից են նոյն իսկ մի քա- նի դեպատներ, անկասկած, արդէն հեռա- ցել են Պեկինից գիւղուորական կցորդնե- րի ուղևեցութեամբ, բայց այս փաստը ոչ մի կապ չունի նոյն տեղից զօրքերը հեռաց- նելու հարցի հետ: Դրա մասին, ուղիղ է, պե- տութիւնների մէջ տեղի են ունենում բանակ- ցութիւններ, բայց այն տեղեկութիւնը, թէ սուսայ կառավարութիւնը արդէն հինգ դրա- կան պատասխան է ստացել պետութիւններից իր առաջարկութեանը, բոլորովին սխալ է: Մինչեւ անգամ Ֆրանսիան դեռ եւս ոչ մի ո- ռոչում չէ յանձնել, այլ միայն յայտնել է, թէ նա չէ կարող պատասխան տալ, մինչեւ որ Պեկինի իր դեպատնից չը ստանայ անբարձաւան տեղեկութիւններ եւ չը լաճ նրա կարծիքը այդ հարցի վերաբերմամբ»:

«Այսպէս ուրեմն, շատ կարելի է, որ գեր- մանական կառավարութեան առաջարկութիւնը սուս կառավարութեան առաջարկութեան դէմ համարական արձագանք կը գտնի միւս պե- տութիւնների կողմից: Հատ երեւոյթին, Ռու- սաստանը ի նկատի ունի այս վերջին հանդա- մանքը. գոնէ «Vossische Zeitung» հաստատում է, թէ սուսայ կառավարութիւնը միւս պե- տութիւնների ազատ կամքին է թողել Պեկին- ից զօրքերը հեռացնելու հարցի վերջը: Թէ ինչպէս կը վարվի ինքը Ռուսաստանը այն դէպքում, եթէ մնացած բոլոր պետութիւննե- րը որոշեն թողնել իրանց զօրքերը Պեկինում — մենք ներկայ րօպէում դժուարանում ենք գուշակել»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական լրագիրները հաղորդում են, թէ սուլթանի թագաւորութեան քառանկիւղ- ամեայ յօրեկանի առթիվով օտար միապետնե- րի կողմից սուլթանին ուղարկված ընծաների մէջ աչքի է ընկնում մի թանկագին, յասպի- մից (սիմա) շինված, ժամացոյց, որի վերջե- րաւոր զարդարված է խոշոր ազամանդնե- րով եւ այլ թանկագին քարերով: Այդ ժամա- ցոյցը ուղարկել է սուլթանին թագաւոր կայս- րը: Վերջին կայսրը ուղարկել է մի արդի գե- ղեցիկ ջրանկարներով եւ բայի դրանից իր հաշիվ ինտասցել է մի շարքուհան շինել Կ. Պոլսում: Նախագահ Լուրէ թագրկի է չքել գօրեկները եւ սեղրի անօթեկէները:

«Standard»-ին հաղորդում են Բելքաստից, որ Տրանսվալը բաժանված է չորս չըջակնե- րի, որոնցից ամեն մէկում նշանակված է մի-մի գեներալ, որպէս ընդհանուր վերահսկող: Նշա- նակված են Պեկին, Կլեմենտ, Գարա եւ Մէտուէն գեներալները. իւրաքանչիւրը նրան- ցից պատասխանատու է իր չըջակնեան համար: Տրանսվալում սկսվել է անձրեւների չըջանքը եւ չափազանց դժուարացել անգլիացիների վերաբերման գործողութիւնները, «Times», հարաւ-ափրիկական պատերազմի վերջին անց- քերի տեսութիւնն անելով, նկատում է, թէ չը շայտով անգլիական զօրքի վերջին ժամա- նակ ունեցած փոքրիկ պետութիւններին, զը- րութիւնը մութն է մնում եւ դեռ եւս ոչ մի նշան չէ ցոյց տալիս, որ Տրանսվալը մտա է վերջնականապէս ընկճվելու: Այս պատճառով խոհեմութիւն կը լինի թերահաւատութեամբ վերաբերվել զէպի այն լուրերը, որոնք ստաց- վում են թշնամու տարաբարութեան վերաբեր- մամբ: Այն տեղը, որ այժմ տեղի պիտի ու- նենան պատերազմական գործողութիւնները, այժպիսիներից է, որոնք ամենից աւելի նպաս- տաւոր են փոքրթիւ խմբերով պատերազմ վարելուն, որ, երեւի, կը տեւէ շատ աւել երկար, քան ենթադրում են մեր օպորմիտ- ները:

Անգլիական լրագիրներից մէկը քիչ ժամա- նակ առաջ հաղորդել էր, թէ Լէօպոլթ թագա-ւորը մտադիր է հրաժարվել բելգիական գահից: Բրիտանի «Soir» լրագիրը այժմ հաստատում է

այդ տեղեկութիւնը եւ բայցարում է, որ թա- գաւորը կը հրաժարվի գահից 1901 թւին յօ- գուտ փրանցեան կոմսի, որը այդ իրաւուն- քը կը զիջանէ իր որդու՝ պրինց Ալբերտին: «Temps»-ի Բրիտանի թղթակիցը, խոսելով այս հարցի մասին, աւելանում է. «Լէօպոլթ թագաւորը ծեր է, շատ է աշխատել իր կեան- քում եւ արժանի է, որ այժմ հանդատութիւն վայելէ: Բայց դրանից նա յոյնած է այն գի- մագրութիւնից, որ նրա գահ բարձրանալու օրից սկսած ցոյց է տուել պարլամենտը պար- տադիր զինուորագրութեան հարցում: Թագա-ւորը մտադիր է արժայ մի քանի ամիս անցկացնել իր նոր պալատում, որ շինում է Վիրփրանկայում, իսկ մեծ մասը «Alberta» գրասանաւում: Ուրիշ լրագիրների տակով պրինց Ալբերտ դեռ եւս շատ երիտասարդ է եւ պատրաստված չէ կառավարութեան գեղը իր ձեռքն առնելու»:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՅ
28 օգոստոսի
ՇԱՆԳՆԱՅ: Ասում են, թէ վուչուանի փո- խարքան իսկոյն ճնշեց այն ապստամբութիւնը, որ բռնկուեւ վրա էր Խանկուում: 10-10-06: Ֆրիկսորբից օգոստոսի 24-ին հաղորդում են, թէ բրիտանական զօրքերը զա- տարիկցին Բեթղէմ, Ֆրիկսորբ, Սենկալ եւ Լէդերբանդ եւ բռնկները նորից գրաւեցին այդ կէտերը: ՀՕՆԳՅՈՆԳ: Հաղորդում են, թէ գեներալ Գեպի հրաման է ուղարկել այստեղ այլ եւս զօրքեր չուղևորելու զէպի Պեկին: ՎԻՆՆԱ: Հաղորդում են, թէ պետական սէյմի նոր ընտրութիւնները կը սկսվին նոյնմը- րի 21-ին: Եւ կը վերջանան 1901-ի յունվա- րի 2-ին: ԿՅՕԼՆ: Օգոստոսի 28-ին հաղորդում են Բեր- լինից, թէ, ինչպէս Շանհայի կայսրական ներկայացուցիչը յայտնեց իր ընկերներին, Նա- պոնիան նոյնպէս կը մասնակցէ Շանհայի դբաւանը եւ մինչ ցամաքային զօրքերի դա- նուատը 600 կապուսական ծովային զինուորնը ափ կը հանվին Շանհայում: ՊԱՐԻՉ: Պիշոն հեռագրում է Պեկինից օ- գոստոսի 16-ին, թէ պրինց Յին տեղեկութիւն տուեց գեպանական մարմին, որ հաւանա- կանաբար Պեկին կը համի օգոստոսի 20-ին: Պրինցը նախօրք հաւաստիացաւ, որ ընդունե- լութիւն կը գտնի: ՇԱՆԳՆԱՅ: Անգլիացիները, դիմագրութեան չը հանդիպելով, դրաւեցին Ֆենտայ: Ռուսները եւ կապուսայինները հետախուզեցին Պեկինի հա- բաւակողմը 20 մղոն տարածութեան վրա եւ ոչ մի տեղ չը հանդիպեցին «ՄՆԵ-Բուռնեցիներ»: Հեռագրաթիւրը ծովային զէպի Պեկին իւրա- քանչիւր ժամ կարծում է: Բոլոր հեռագիրները, բայց ուսականներից եւ կապուսականներից, հաղորդում են այն հեռագրաթիւրով, որ շինել են անգլիացիները եւ ամերիկայիները: ՆԻՒ-ԻՕՐԿ: Վաչկապոնից ստացված տեղե- կութիւններին նայելով՝ Միացեալ-Նահանգ- ները կամենում են հեռացնել իրանց զօր- քերը Պեկինից, որովհետեւ նախատեսում են, որ պետութիւնների մէջ համաձայնութիւն կայանալ չէ կարող Ռուսաստանի վար- մուռքի պատճառով. մինչդեռ «Tribune», որ գործերից լաւ տեղեկութիւններ ունեցող լրա- սիր է, ասում է, թէ Ամերիկայի շայքերը միութիւն պահպանելու պետութիւնների մէջ խոստանում են աջողութիւն գտնել: Ամերիկա- կան նախագծով առաջարկվում է նորից 1,000 մարդուց բաղկացած պահպան զօրաբաժին կազմել Պեկինում գեպանատների համար, իսկ նրա պատերից դուրս թողնել էլի 2,500 մարդ, որոնք կարողանային արագութեամբ օգնու- թեան հասնել 1000-ին եւ վերջապէս մի այլ տեղում պահել 20,000 զինուոր: ՆԻՒ-ԻՕՐԿ: Եթէ Կոնցեր չը կարողանայ ա- լելի լաւ ապացոյցներ ներկայացնել Պեկինում մնալու համար, քան մինչեւ այժմ ներկայաց- րել է, այն ժամանակ նրան կը հրամանագրվի անյապող դեպատաստուր փոխադրել Շանհ- հայ: Չաֆֆիի զօրքերը կուղևեցնեն դեպատնի մինչեւ Տակու, իսկ այնտեղից նրան Շանհայ կը հասնէ ծովային Բեմէ: Ամերիկական զխաւոր ոյժերը կը մնան Չինաստանում ոչ աւելի քան սեպտեմբերի 19-ը: Պեկին: Բրիտանական, ամերիկական, ու- սայ եւ կապուսական զօրքերի զօրապետները կպրին մի յայտարարագիր, որով յայտնում են, թէ կը պահպանեն կարգը, խոստանում են ըը- նակիցներին հովանաւորել եւ խորհուրդ են տալիս նրանց վերսկսել իրանց գործերը: Սպա- սում են, որ այդ յայտարարագիրը ապաւանա-

կուսակցության մէջ հաւատ կը զարթոյնէր զէպի նոր կարգ ու կանոնը: Փողոցները զեռ եւս զատարկ են: Ազգաբնակչության մէջ նկատելի է պաշարեղէնի պակասութիւն, որովհետեւ գիւղերից ոչինչ չէ բերվում:

ԳԱՌՆԱՅՈՒՆ: Տեխասի նահանգապետը հեռագրում է, որ երէկ նահանգի վրայից անցաւ մարտիկ, որին զոհ գնացին 3,000 մարդիկ. 4000 շինութիւններ, մեծ մասամբ մարդկային բնակարաններ, աւերակ են դարձել: Արի վրա զանազան պահեստները եւ նաւարանի շտաբայինները ամբողջովին կործանված են:

ՇԱՆՔՆԱԾ: Ինձանի մանջուր փոխարքան օգոստոսի 23-ին դուրս եկաւ կիլիկիոսից մի ուժեղ զորաբաժնով զէպի հիւսիս կայսրին օգնութիւն ցոյց տալու համար:

ՊԵՏԻՆ: Եւպոստոսները հեռացին իրանց զօրքերը ամարային պալատից, որովհետեւ ուսանելը ապացուցեցին, որ եւպոստոսներից առաջ պարտք գրաւել էին կազմակերպ: Պատու գրասեղանը ստանալու:

ՏՎԵՐ: Երէկ, հաղորդակցութեան ճանապարհների միջոցով եւ նահանգապետի ներկայութեամբ, Բեդլիսո կայսրանի ժողովուրդը ընդհանուր առմամբ կոչու ապստամբութեան դրոշմը հիմնարկութիւնը: Իշխան իրիւղ իր ճառի մէջ բացատրեց նոր դրոշման կարեւոր նշանակութիւնը, որտեղ պէտք է կոչու պատրաստի բոլորովին նոր, ամբողջ աշխարհում առաջին անգամ դրոշմադրվող ձևով եւ պէտք է ծախվի պարզ 10 կոպէկով: Բացի վառելիքէ ժամանցներուց, նոր դրոշմանը կը սկսէ արժէքաւոր քիմիական արտադրութիւններ պատրաստել, որոնք այժմ ստացվում են արտասահմանից:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Չափֆի հաղորդում է Պէլի-նից, օգոստոսի 22-ից, ճիւղանալով են նշաններ, որ այստեղ երկար ժամանակ չէ կարելի վերականգնողական շարքերութիւններ: Իրական դեպքում թիւերը շատ չուտով ուղեւորվում է Տեանձինս Ինձ անկախ կառուցում, որ չինական կառավարութիւնը չի վերադառնայ մինչեւ Պէլիսում կը մնայ օտար զօրք: Եթէ այդ ճիւղէ մեր դեպքում թիւերը չէ կարող դիպումատիական ոչ մի խնդիր լուծել: Իմ կարծիքով, Պէլիսը կարող է բանակ ծառայել զաշխարհի զօրքի համար, մինչեւ որ պետութիւնները չը զետեղվեն եւ ուրիշ կէտերով:

ԼՕՆԴՈՆ: Գինեւրալ Գէլլի հեռագրում է օգոստոսի 20-ից, ՎՄԵՆԵՐ գրաւեցինք Սուեյս պայմանական կայսրանը եւ Լուգոսեյա Երկրաբանական կամուրջը եւ այդպիսով տիրապետում ենք զէպի Պոստիֆոն տանող ճանապարհի վրայ:

ԼՕՆԴՈՆ: Բէյտէրի գործակալութեան տեղեկութիւններին համաձայն, Լիբանոսի յանձնեց պետութիւններին իր հաւատարմագրերը, որոնք խաղաղութեան լիարժեքութիւններ վարելու լիազօրութիւն են տալիս նրան: Հաւատարմագրերը արված են նրան կայսրի պալատից, եւ նրանց խտրութիւնը հաղիւ թէ կատարվելի լինի:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Վուտինֆան յանձնեց արտաքին գործերի միջնորդութեանը բողոքի մանր հրովարտակը, որ հրատարակված է երկու շաբաթ առաջ: Դրանով Լիբանոսի լիազօրութիւն է ստանում վերջնականապէս վերացնել երկրպագութիւնը եւ իր հայեցողութեամբ ամեն տեսակ առաջարկութիւններ անել, առանց դիմելու կայսրին: Այդ լիազօրութիւնները վերացնում են բոլոր առարկութիւնները Լիբանոսի լիազօրութեան ղեկ խաղաղութեան բանակցութիւններ վարելու:

ԼՕՆԴՈՆ: Բորէրտոս հաղորդում է Բէլֆաստից օգոստոսի 27-ից, Վերջին գուրս եկաւ կարօլինայից եւ ճանապարհին նշանաւոր դիմադրութեան հանդիպեց, բայց կամայ կամայ դուրս բերեց թշնամուն երեք դիրքերից, որոնցից մէկը գրաւեց գրո՞ տալով Մեր կորուստները, ըստ երեւոյթին, աննշան են: Յրէն շարունակեց դիմադրել Բարբէրտոսն: Համիլտոն հաղորդում է, որ Բուլլեր երէկ առաւօտ յարձակում գործեց թշնամու դիրքի վրա, որը զանվում էր խոշոր բլուրների շղթայի վրա, 1500 ոսնաչափ բարձրութեամբ: Նրանց ամենահետաւոր ծայրում զանվում է Սպիլգոպ: Ճանապարհը շատ դժուարացանելի էր, այդ պատճառով հետեւակ զօրքը, թնդանօթաձիկների օգնութեամբ, գրո՞ տալով գրաւեց դիրքը: Թշնամին յետ քաշվեց նեղ ճանապարհով, եւ այդ ժամանակ կորցրեց շատ մարդիկ: Նրա կորուստները աւելի մեծ կը լինէին, եթէ թանձր մառխուղ չը լինէր: Մեր կորուստներն են 13 սպանվածներ եւ 25 վիրաւորվածներ:

ԵՕՆԱՆՆԵՍՏՐՈՒԳՅ: Լրագիրները հաղորդում են, որ կրիւզէր եւ Շաէնի փախան Դէլազոս ծովախորշը:

Ուրաղիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչները՝ ԹԱԳՈՒՀԻ ՏՈՒՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԻՎՈՐՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 գնացք:		№ 3 գնացք:	
Բաղրից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.	Բաղրից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.
Քիֆիս է հասնում առ. 8 ժ 53 ր.	եր. 5 ժ 34 ր.	Քիֆիս է հասնում առ. 8 ժ 53 ր.	եր. 5 ժ 34 ր.
Քիֆիսից դուրս է գալիս 9 ժ 32 ր.	եր. 6 ժ 34 ր.	Քիֆիսից դուրս է գալիս 9 ժ 32 ր.	եր. 6 ժ 34 ր.
Բաթում է հասնում 9 ժ 1 ր.	առ. 7 ժ 14 ր.	Բաթում է հասնում 9 ժ 1 ր.	առ. 7 ժ 14 ր.
№ 6 գնացք:		№ 4 գնացք:	
Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.	Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.
Քիֆիս է հասնում 7 ժ 15 ր.	առ. 8 ժ 42 ր.	Քիֆիս է հասնում 7 ժ 15 ր.	առ. 8 ժ 42 ր.
Քիֆիսից դուրս է գալիս 7 ժ 18 ր.	առ. 10 ժ 05 ր.	Քիֆիսից դուրս է գալիս 7 ժ 18 ր.	առ. 10 ժ 05 ր.
Բազու է հասնում ցեր. 12 ժ 10 ր.	առ. 5 ժ 16 ր.	Բազու է հասնում ցեր. 12 ժ 10 ր.	առ. 5 ժ 16 ր.

արագ գնացք
Քիֆիսից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում 9 ժ 41 ր.
Քիֆիսից դուրս է գալիս գիշ. 11 ժ 18 ր.
Քիֆիս է հասնում առ. 9 ժ 30 ր.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԻԱՆՈՑ
Բ. ՆՆԻՍՆԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնջովի արձանի հանդէպ)
ա մ ե գ օ ր, բ ս ց ի կ ի ր ա կ ի օ ր ե ր ի ց:
Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. Կրթութեան, վերականգնող (սիֆիլիս) և միլիտան հիւանդ. և Մ. Զիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարոլոգիայի և Ք. Պ. Պրոստակի—12—1 ժ. ակտիւ, քթի, կտորի և կրծքի և Ք. Բարանասեան—11—12 ժ. կանանց և երեխանց հիւանդ. և Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխանց և Ե. Պ. Պրոստակի—5—6 ժ. և Ն. Երախովի—6—7 ժ. նեարոլոգի (էլիկտրոստիմուլիս), վիճակ և մոլորակ և Ք. Ա. Նաւասարդեան—7/8—8 ժ. և Վար 50 կ. շարտերը ձրի Համալսարանի (Կոնսիլումի) և օպերացիայի համար առանձին և Օ. Ս. Աւալանիսի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ. Հիւանդանոցի վերտեսուչ՝ Բժշկապետ **ՆԱԻՍԱՐԴԵԱՆ**

Զորքը ժամի 4-ին ճաշից յետոյ:
ՄՈՒՇՏԱՅԻՒ ԱՅՐՈՒՄ
Երկու Զրահեղձութիւնից ազատող կայսերական ընկերութեան թիֆլիսի չրջանի վարչութեան կը արվի

Ժողովրդական գրասեր
Սիկլըր ժամի 4-ին ճաշից յետոյ:
Ձիւնուական երաժշտութիւն, երգչներ եւ զուրնա. երաժարութիւն: Մուսիկ վճարը 20 կոպէկ:

Կար ու ձեր Դ Պ Ր Ո Ց
ՕՐ. ՆԱՏԱԼԻԱ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ
Աշակերտութիւնների ընդունելութիւնը ամենաշին օր է: Պարագում են երկու նոր տեսակ մեթոդով: Հասցէն. Թիֆլիս, Մոշուու Եկեղեցու հանդէպ. № 13. 2—6

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏՆԵՐ.
Եթէ կուզէք նորուս երգչներին ձեռքը տալ
Ս. Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի
Ե Ր Գ Ե Ց Ո Ղ Ո Ւ Թ Ե Ա Ն
ամենայնաբար ստորը, դիմեցէք. Արմաւիր, (Կուբանս. Օբլ.) րեգենտու Սիմեոն Մաանիչ. Գիւնն է 15 կոպ. 50-ով պահանջողին 20% զիջում 3—3

Ատանները եւ բերանի խոռոչի հիւանդութիւնները
ԲԺ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿԱՃԿԱՃԵԱՆ
ընդունում է հիւանդներ օգոստոսի 17-ից Երեւանի հրապարակ, ՐՈՅՈՎՅԻ Իււսանկարչական գործարանի տակը: 6—25

ԱՐԻՍՏԵՆԵՍ ԵՂԻՍԱԳՈՍ ՍԵՒՐԱՅԵԱՆ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ.
Գ Ի Ն Է 1 Բ.
Թիֆլիսում դիմել—Կենտրոնական եւ Զաք. Գրգորեանցի գրավաճառանոցներին, նոյնպէս եւ Աղէքսանդր Ստեփանեանցին (Զուրաբովի քարվանսարայում): (Ե. հ. չ.) 7—10

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՁ
Ե Ի Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն
Ս. Պետերբուրգի Ֆրեդերիկան կուրսերը աւարտած
Վ. Ս. ՉՊՇԿԵԱՆԻ
Երկրանների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 26-ից, ուսուցիչ—սեպտեմբերի 1-ից: Արխիվի փողոց, տուն № 4. Архивный переулок [продолжение Католической] домъ № 4: 3—3



Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
Վ. Ե Ի Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ
Գոյով. պրոսպ., առաջին գիմնազիայի հանդէպ, տ. Գալուէթի ս. Գէորգ Եկեղեցու
Աշնան համար ստացված են ՄԵՇՊ ՔՍՆԱԿՈՒԹԵԱՄԲ
Փորձէնից զգեստներ Կլասիքական գիմնազիայի, Բէալական և առևտրական ուսումնարանների համար:
Ընդունում ենք առեւն տեսակ պատուէրներ
4—10

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ի Ա Ն Զ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՄՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ա տ տ ե ս տ ա տ ն ե ր:
Աւանդելի աւարկաբ սրանք են՝ 1) Առևտրական Տեսութիւն, 2) Առևտրական Քուրսանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բաժնակի), 4) Փուլաբանութիւն համարչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղարվեստ, վատ ձեռքի ուղղելու:
Ուսուցիչ սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենաշին օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնող բնակարանում, Սոյալակում, Աղէքսանդր Փրիզօսովի տանը № 9, Սեպտեմբրական և Կրթութեան փողոցների անկիւնում: Մրաքիրը և կանօնները կարելի է ստանալ ձրի ա պ է ս երգ. Տօլլանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղաբար դիմում են՝ Трфаясь, С. П. Мануэлянци, (չ. չ.) 18—25

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆԱՄԵԱՆ
Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է»
Երկու սեռի անձանց 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է անում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ Ն
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենաին առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերտիկի գործարանական հաշուեկետեւութեան:
Բ) Առևտրական թուղթակցութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղարվեստի և ամենավատ ձեռքերի ուղղելու:
Պարագումները սկսվելու են 1900 թ-ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20 ժամ սուրի յետոյ. իսկ կրկնակի օրերը լինելու են առանձին գործնական պարագումները:
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, Ս Օ Լ Օ Լ Ա Կ, Սեպտեմբրական փողոց, տուն Լիսիցեանի, № 20:
Վերջինից հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիսում, հեղինակի ժող. և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: Գիւնն է 3 ր. 50 կոպէկ: Օտարաբաղաբարները դիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու: 19—30

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ ШОКОЛАДЪ СІУ
M. 9,730
10—52
ФАБР. С. СІУ И К. МОСКВА. (Հ)